

Սակայն Յովակիմ Արքեպ.ի կամ անոր մասին վերոյիշեալ գրութիւններէն կ'երեւայ, թէ Յովակիմ Արքեպ. ակամայ կը կենար Հռոմ, տէրութենէն արգելուած ըլլալով քաղաքին շրջանակէն դուրս ելել, «այս վեց տարի է որ տեղն թողնում չէին թէ քաղաքէն դուրս գայր», այն ամբաստանութիւններուն համար, զոր «չարածիչ մարդիք» իրեն դէմ ըրած էին: Վերջապէս 1716 Նոյ. 4ին գիշերանց կը փախչի քաղաքէն դուրս, տասն օրէն Լիվոնոյ կը հասնի եւ անկէ նաւով Մարսիլիա կ'անցնի: Այս տեղ կը գտնէ նորաւջէն եկեղեցի մը Հայոց շատ պարտքերու տակ ինկած: Անկէ կը մեկնի Ամսդերտամ, յետոյ Մոսկուա, ուր կը գտնուէր արդէն 27 փետր. 1718ին: Ասկէ կ'երթայ Ղազան, ուր հայ ազգին թելադրութեամբը, ինչպէս ինքը կ'ըսէ, «Աւագ Մարգարիչ» իր փոխանորդ երիցուն կողմանէ, կամ Խորայէլ Օրիի ընկեր Մինաս Վարդապետի կողմանէ, ինչպէս կ'ըսէ Խալաթեան, կը բանտարկուի եւ կը մնայ երկու տարի բանտ: Թէպէտ ասկէ գրաւոր դիմումներ կ'ընէ նորընտիր Աստուածատուր Կաթողիկոսին, Պետրոս Մեծ Կայսեր եւ ուրիշ անձինքներու, եւ սակայն զինք չեն ազատեր, եւ 1720ին բանտին մէջ, ծեր հասակաւ, մեծ խեղճութեամբ կը վախճանի: Ասոնք են Պրոֆ. Գր. Խալաթեանցի հաղորդած յիշեալ տեղեկութիւնները, որոնց բնագիրն այստեղ յառաջ կը բերեմ: